

2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2011թ. N 2

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի  
նախապատրաստման և անցկացման աշխատանքների ընթացքի  
վերաբերյալ հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին

---

Լսելով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական  
ծառայության հաղորդումը Հայաստանի Հանրապետությունում 2011  
թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման  
աշխատանքների ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը  
ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետությունում 2011թ.  
մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների  
ընթացքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային  
վիճակագրական ծառայության հաղորդումը:

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ փոխվարչապետ

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա.Գևորգյան

2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2011թ. N 3

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի  
ծրագրի (հարցաշարի) նախագծին հավանություն տալու մասին

---

Լսելով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական  
ծառայության հաղորդումը Հայաստանի Հանրապետությունում 2011  
թվականի մարդահամարի ծրագրի (հարցաշարի) վերաբերյալ և  
«Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ  
հոդվածի համապատասխան Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում 2011  
թվականի մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագծին»:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ազգային  
վիճակագրական ծառայությանը սկսել «Հայաստանի Հանրապետությունում  
2011 թվականի մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագիծը»  
Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը  
ներկայացնելու գործընթացը:

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ փոխվարչապետ

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա.Գևորգյան